ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2024թ. հունվարի 30-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 23-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Ասատրյան):
2. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահի հաշվետվությունը:
3. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ նոր նախագահի ընտրություն:
4. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի կրթական ծրագրի մշտադիտարկման զեկույցի քննարկում և հաստատում:
5. Հայցորդների ատեստավորում:
6. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Ասատրյան):

Ի.գ.թ., դոցենտ Արտակ Ասատրյանը ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի ծավալած ուսումնական և գիտահետազոտական գործունեությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ղազինյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահի հաշվետվությունը:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Մարիա Հովհաննիսյանը ամփոփ տվյալներ ներկայացրեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ գործունեության վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ղազինյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Մարգարյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ նոր նախագահի ընտրություն:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Մարիա Հովհաննիսյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց ՈՒԳԸ նոր նախագահ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի երրորդ կուրսի ուսանող Մարիամ Մելքոնյանի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ նոր նախագահի թեկնածությունը:

4. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի կրթական ծրագրի մշտադիտարկման զեկույցի քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի կրթական ծրագրի մշտադիտարկման հանձնաժողովի նախագահ ի.գ.դ., պրոֆեսոր Հ.Խաչիկյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց ֆակուլտետի բակալավրիատի կրթական ծրագրի մշտադիտարկման զեկույցի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի կրթական ծրագրի մշտադիտարկման զեկույցը (զեկույցը կցվում է):

5. ԼՍԵՑԻՆ. Հայցորդների ատեստավորում:

5.1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Սերգեյ Ղազինյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոցենտ Վ.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սերգեյ Ղազինյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 42 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, 35 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 2-րդ տարվա հայցորդ Սամվել Ջաբաղյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոցենտ Վ.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սամվել Ջաբաղյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 25 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, 25 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 3-րդ տարվա հայցորդ Տաթևիկ Սիրադեղյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոցենտ Վ.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տաթևիկ Սիրադեղյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել անհրաժեշտ բոլոր կրեդիտները կրթական բաղադրիչից և պրակտիկայից, 30 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.4. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 2-րդ տարվա հայցորդ Արամ Տալոյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոցենտ Վ.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արամ Տալոյանը հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել է «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Կայուն զարգացում և գլոբալ մարտահրավերներ», «Համալսարանական դասավանդման դիդակտիկա» դասընթացներին, ձեռք է բերել 49 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.5 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 2-րդ տարվա հայցորդ Հասմիկ Հակոբյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոցենտ Վ.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հասմիկ Հակոբյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 44 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, 40 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.6. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 2-րդ տարվա հայցորդ Հասմիկ Նազարեթյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոցենտ Վ.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սամվել Ջաբաղյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 10 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, 49 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.7. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 3-րդ տարվա հայցորդ Համլետ Հարությունյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոցենտ Վ.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Համլետ Հարությունյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել անհրաժեշտ բոլոր կրեդիտները կրթական բաղադրիչից և պրակտիկայից, 48 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.8. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 2-րդ տարվա հայցորդ Ռոբերտ Մհերյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռոբերը Մհերյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 19 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, 4 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.9. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Սուրեն Բաղինյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սուրեն Բաղինյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 34 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, 49 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.10. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Գարիկ Աբելյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գարիկ Աբելյանը գարնանային կիսամյակի համար ընտրվել են կրթական բաղադրիչից «Գիտաչափության և գիտական շտեմարաններ» և «Անձնական աճ և ինքնակարգավորում» առարկանները, ձեռք է բերել 10 կրեդիտ պրակտիկայից, 30 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.11. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Հովհաննես Հովհաննիսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հովհաննես Հովհաննիսյանը գարնանային կիսամյակի համար ընտրել է կրթական բաղադրիչից անհրաժեշտ առարկանները, ձեռք է բերել 10 կրեդիտ պրակտիկայից, 30 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.12. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Հովհաննես Հովհաննիսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հովհաննես Հովհաննիսյանը գարնանային կիսամյակի համար ընտրել է կրթական բաղադրիչից անհրաժեշտ առարկանները, ձեռք է բերել 10 կրեդիտ պրակտիկայից, 30 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.13. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Վիրաբ Համարձումյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վիրաբ Համբարձումյանը ձեռք է բերել 15 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, աշխատում է թեկնածուական ատենախոսության առաջին գլխի վրա, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.14. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 2-րդ տարվա հայցորդ Նելլի Հարությունյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նելլի Հարությունյանը ձեռք է բերել 29 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, աշխատում է թեկնածուական ատենախոսության առաջին գլխի վրա, տպագրել է 3 գիտական հոդված ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.15. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 3-րդ տարվա հայցորդ Անուշ Սումբատյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անուշ Սումբատյանը ձեռք է բերել 33 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, տպագրել է 1 գիտական հոդված և տպագրության պատրաստում երկրորդը, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6. 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում առանձին դասընթացների շրջանակում ուսումնական պրոցեսը վարելու, գիտական, կազմակերպչական և տեխնիկական հարցերը կազմակերպելու համար պրոֆեսորի օգնական ներգրավելու վերաբերյալ:

6.1. ԼՍԵՑԻՆ – ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Լուսինե Հովհաննիսյանին 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում առանձին դասընթացների շրջանակում ուսումնական պրոցեսը վարելու, գիտական, կազմակերպչական և տեխնիկական հարցերը կազմակերպելու համար ի.գ.դ, պրոֆեսոր Գ.Ս.Ղազինյանի օգնական ներգրավելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Լուսինե Տիգրանի Հովհաննիսյանին ներգրավել որպես ի.գ.դ, պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյանի օգնական:

6.2. ԼՍԵՑԻՆ – ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Հրայր Հովակիմյանին 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում առանձին դասընթացների շրջանակում ուսումնական պրոցեսը վարելու, գիտական, կազմակերպչական և տեխնիկական հարցերը կազմակերպելու համար ի.գ.դ, պրոֆեսոր Ս.Ա.Դիլբանդյանի օգնական ներգրավելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Հրայր Հովակիմյանին ներգրավել որպես ի.գ.դ, պրոֆեսոր Ս.Ա.Դիլբանդյանի օգնական:

6.3. ԼՍԵՑԻՆ – ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Գևորգ Բարսեղյանին 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում առանձին դասընթացների շրջանակում ուսումնական պրոցեսը վարելու, գիտական, կազմակերպչական և տեխնիկական հարցերը կազմակերպելու համար ի.գ.դ, պրոֆեսոր Ա.Ռ.Մարգարյանի օգնական ներգրավելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Գևորգ Բարսեղյանին ներգրավել որպես ի.գ.դ, պրոֆեսոր Ա.Ռ.Մարգարյանի օգնական:

6.4. ԼՍԵՑԻՆ – ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 3-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Էլինա Գեղամյանին 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում առանձին դասընթացների շրջանակում ուսումնական պրոցեսը վարելու, գիտական, կազմակերպչական և տեխնիկական հարցերը կազմակերպելու համար ի.գ.թ, դոցենտ Վ.Ն.Այվազյանի օգնական ներգրավելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. Գ.Դանիելյանը, դոցենտ Վ.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի 3-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Էլինա Գեղամյանին ներգրավել որպես ի.գ.թ, դոցենտ Վ.Ն.Այվազյանի օգնական:

6.5. ԼՍԵՑԻՆ – ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Կարոլինա Հարությունյանին 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում առանձին դասընթացների շրջանակում ուսումնական պրոցեսը վարելու, գիտական, կազմակերպչական և տեխնիկական հարցերը կազմակերպելու համար ի.գ.թ, դոցենտ Հ.Ա.Ենգոյանի օգնական ներգրավելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. Գ.Դանիելյանը, դոցենտ Վ.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Կարոլինա Հարությունյանին ներգրավել որպես ի.գ.թ, դոցենտ Հ.Ա.Ենգոյանի օգնական:

6.6. ԼՍԵՑԻՆ – ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Հասմիկ Նազարեթյանին 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում առանձին դասընթացների շրջանակում ուսումնական պրոցեսը վարելու, գիտական, կազմակերպչական և տեխնիկական հարցերը կազմակերպելու համար ի.գ.դ, պրոֆեսոր Գ.Բ.Դանիելյանի օգնական ներգրավելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. Գ.Դանիելյանը, դոցենտ Վ.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ Հասմիկ Նազարեթյանին ներգրավել որպես .գ.դ, պրոֆեսոր Գ.Բ.Դանիելյանի օգնական:

6.7. ԼՍԵՑԻՆ – ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Վահագն Թանգամյանին 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում առանձին դասընթացների շրջանակում ուսումնական պրոցեսը վարելու, գիտական, կազմակերպչական և տեխնիկական հարցերը կազմակերպելու համար ի.գ.դ, պրոֆեսոր Վ.Վ.Հովհաննիսյանի օգնական ներգրավելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Վահագն Թանգամյանին ներգրավել որպես ի.գ.դ, պրոֆեսոր Վ.Վ.Հովհաննիսյանի օգնական:

6.8. ԼՍԵՑԻՆ – ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Տաթևիկ Մարտիրոսյանին 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում առանձին դասընթացների շրջանակում ուսումնական պրոցեսը վարելու, գիտական, կազմակերպչական և տեխնիկական հարցերը կազմակերպելու համար ի.գ.դ, պրոֆեսոր Վ.Դ.Ավետիսյանի օգնական ներգրավելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. Ա.Հայկյանցը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Տաթևիկ Մարտիրոսյանին ներգրավել որպես ի.գ.դ, պրոֆեսոր Վ.Դ.Ավետիսյանի օգնական:

6.9. ԼՍԵՑԻՆ – ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Դավիթ Բակլաչյանին 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում առանձին դասընթացների շրջանակում ուսումնական պրոցեսը վարելու, գիտական, կազմակերպչական և տեխնիկական հարցերը կազմակերպելու համար ի.գ.դ, պրոֆեսոր Ա.Մ.Հայկյանցի օգնական ներգրավելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. Ա.Հայկյանցը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Դավիթ Բակլաչյանին ներգրավել որպես ի.գ.դ, պրոֆեսոր Ա.Մ.Հայկյանցի օգնական:

6.10. ԼՍԵՑԻՆ – ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 3-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Արմեն Մեղրյանին 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում առանձին դասընթացների շրջանակում ուսումնական պրոցեսը վարելու, գիտական, կազմակերպչական և տեխնիկական հարցերը կազմակերպելու համար ի.գ.դ, դոցենտ Ա.Մ.Ասատրյանի օգնական ներգրավելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Արմեն Մեղրյանին ներգրավել որպես ի.գ.դ, դոցենտ Ա.Մ.Ասատրյանի օգնական:

7. Ընթացիկ հարցեր:

7.1. ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Արաշ Դերամբարշի՝ թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Վաղարշյանը, դոցենտ Տ.Սիմոնյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Արաշ Դերամբարշի՝ «Սննդային թափոնների պատմությունը և իրավական հակասությունները Անտիկ աշխարհից մինչև մեր օրերը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի. գ.թ, դոցենտ Տարոն Սիմոնյանին,

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ ***Գ. Ղազինյան***

Խորհրդի քարտուղար ***Տ.Սուջյան***

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄԲԻՈՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ամբիոնի կողմից կատարված աշխատանքների մասին

1.Գիտահետազոտական աշխատանքներ

Ամբիոնի անդամների կողմից հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել է 3 գիտական հոդված:

1. Ասատրյան Արտակ – 1. The re-opening of judicial proceedings in the Armenian law and practice following the judgments of the European court of human rights, Երևան, «Բանբեր Երևանի համալսարանի. իրավագիտություն», 2023 Vol. 14 No. 2 (39) (2023), էջեր 106-121:

3. Անի Սիմոնյան - International Patent Law Conflicts With the Right of Access to Medicines and Healthcare: Key Aspects, Բանբեր Երևանի Համալսարանի, 2023 Vol. 14 No. 2 (39) (2023), 131-141:

4. Սերգեյ Ղազինյան - The Linkage Between Human Trafficking and Migration: Identification of Victims, 2023 Vol. 14 No. 2 (39) (2023), 122-130:

Առաջիկայում տպագրության կուղարկվեն հետևյալ հոդվածները՝

Բանբեր Երևանի Համալսարանի, իրավագիտություն՝

Արտակ Ասատրյան – Խորհրդարանական լսումները՝ որպես հանրային քննարկումների իրականացման ձև:

Անի Սիմոնյան – Օտարերկրյա ներդրումների պաշտպանության միջազգային իրավական հիմնախնդիրները զինված ընդհարումների ժամանակ:

Սերգեյ Ղազինյան – National Monitoring Mechanisms: Strengthening the Action Against Trafficking in Human Beings.

Պետություն և իրավունք՝

Արմեն Մեղրյան - Եվրասիական տնտեսական միության դատարանի գործունեության որոշ հարցերի շուրջ. Իրավահամեմատական վերլուծություն:

Ռոզա Առաքելյան – Արդարադատության միջազգային դատարանի վճիռների կատարման միջազգային կառուցակարգերը:

Սիրանուշ Գրիգորյան – Պլանավորված ռազմավարություններ՝ չնախատեսված հետևանքներ. Անհատական և համապարփակ պատժամիջոցների համեմատություն:

Ֆիլիանա Բելլույան – Միակողմանի տնտեսական սանկցիաների իրավաչափության հիմնախնդիրները:

Ամբիոնում պարբերաբար նիստերի ընթացքում ներկայացվում են ամբիոնի անդամների հաղորդումները և գիտական զեկույցները:

Ամբիոնի անդամներից հանդես են եկել մասնագիտական վերլուծություններով տարբեր ռադիո և հեռուստահաղորդումների շրջանակներում:

Մասնակցություն գիտաժողովներին

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսները և ասպիրանտները մասնակցել են դեկտեմբեր ամսին ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների, հայցորդների տարեկան գիտաժողովին, որտեղ հանդես են եկել զեկուցումներով:

Ամբիոնի դասախոսներից և հայցորդներից զեկուցումներով հանդես են եկել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի գործակցության շրջանակում կազմակերպված «Մարդու իրավունքների հետազոտությունը Հայաստանում. արդի և նոր ձևավորվող հիմնախնդիրներ» խորագրով միջազգային գիտաժողովին: Գիտաժողովի շրջանակներում

ներգրավված ենք եղել նաև ներկայացված մոտ 3 տասնյակ հայտերի նախնական ուսումնասիրությանը, ինչի արդյունքում ներկայացրել ենք ամբիոնի դիրքորոշումը դրանց վերաբերյալ:

Ամբիոնի ասպիրանտներից զեկուցմամբ հանդես են եկել նաև ՈՒԳԸ ամենամյա գիտաժողովում:

Դրանից բացի, ամբիոնի դասախոսներից մասնակցել են մի շարք գիտաժողովների, որոնք անմիջականորեն առնչվել են նաև վերջիններս կողմից դասավանդվող առարկաներին

1. «EXPLORING ARBITRATION IN THE CIS REGION: LEGISLATION, JURISPRUDENCE, AND DIRECTIONS OF THE ENFORCEMENT PRACTICE, UAE November 2023

2. «Տնտեսության գլոբալացման պայմաններում միջազգային առևտրային արբիտրաժում վեճերի լուծման ժամանակակից մեթոդների միջոցով գործարարության վստահության բարձրացումը» Yerevan 2023

3. Ամբիոնի դոցենտ, իգ. թ. Քնարիկ Վարդանյանը մասնակցել է՝

- Միգրացիայի և քաղաքացիության ծառայության աշխատակիցների վերապատրաստում «Ապաստան» և «Ապաքաղաքացիություն» թեմաներով, մայիս-նոյեմբեր, 2023, Երևան, Հայաստան:
- «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից ԱՄՆ Ջուլիա Թաֆթի՝ փախստականների համար հիմնադրամի ֆինանսավորմամբ և Հայաստանում ՄԱԿ-ի Փախստականների գործակալության հետ համագործակցությամբ «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված քարոզարշավ» ծրագրի շրջանակներում փորձագիտական թիմի աշխատանքային այց Թիֆլիս, Վրաստան, հուլիսի 12-14, 2023:

նպատակն էր ծանոթանալ Վրաստանի Հանրապետությունում քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակը որոշելու գործընթացին և ընթացակարգերին, ինչպես նաև առկա մարտահրավերներին: Աշխատանքային այցի ընթացքում փորձագիտական թիմը հանդիպումներ է

կայացել Վրաստանի Արդարադատության նախարարության Հանրային ծառայությունների զարգացման գործակալության, Վրաստանում ՄԱԿ ՓԳՀ-ի գրասենյակի, Նորարարության և բարեփոխումների կենտրոնի (IRC), Right Georgia (RG) – Վրաստանում ՄԱԿ ՓԳՀ-ի ներկայիս գործընկերոջ ներկայացուցիչների հետ:

- ԱՄՆ Ջուլիա Թաֆթի՝ փախստականների համար հիմնադրամի ֆինանսավորմամբ և Հայաստանում ՄԱԿ-ի Փախստականների գործակալության հետ համագործակցությամբ «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից իրականացվող «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված քարոզարշավ» ծրագրի շրջանակներում որպես փորձագետ Radio Van - FM 103.1-ի եթերում խոսել եմ ՀՀ-ում քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի և ապաքաղաքացիության մասին, օգոստոսի 1, 2023:

- «Փախստականների իրավունք» խորագրով 12-րդ ամառային դպրոց՝ կազմակերպված ՄԱԿ ՓԳՀ-ի ֆինանսական աջակցությամբ «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից հայկական առաջատար բուհերի իրավաբանական կլինիկաների ուսանողների մասնակցությամբ, նոյեմբեր 10-12, 2023, Աղվերան, Հայաստան:

Դպրոցին ներկայացրել եմ դասախոսություն <<Փախստականների միջազգային իրավական պաշտպանության ձևավորման պատմությունը, և 1951թ. փախստականի հասկացությունը՝ ըստ Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի>> վերտառությամբ:

- ԱՄՆ պետքարտուղարության դրամաշնորհի շրջանակներում՝ ՄԱԿ ՓԳՀ-ի հետ սերտ համագործակցությամբ «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից իրականացվող «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված քարոզարշավ» ծրագրի շրջանակներում ապաքաղաքացիության և չփաստաթղթավորված անձանց հարցերով աշխատանքային խմբի հանդիպում, նոյեմբեր 17-18, 2023, Ծաղկաձոր, Հայաստան:

Ծրագրի շրջանակներում հանդես եմ եկել որպես փորձագետ՝ «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակելու, այն շահագրիգիռ պետական մարմինների հետ քննարկելու և հասարակության շրջանում դրա վերաբերյալ իրազեկում իրականացնելու ոլորտներում:

- «Փախստականի իրավական կարգավիճակը և ապաստանի ընթացակարգը» վերտառությամբ դասախոսություն ԱՄՆ դեսպանատան ֆինանսական աջակցությամբ «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից իրականացվող «Տեղահանված անձանց և փախստականների հետ աշխատող պետական և ոչ պետական մարմիններում ոլորտում մասնագիտացած պրակտիկանտ-ուսանողների պատրաստում և նրանց կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում, հունվար 12, 2024, Երևան, Հայաստան

2. Ուսումնական գործունեություն

Ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք

ա) Ուսումնական պլան, ուսումնական ծրագրեր

Ամբիոնի անդամները դասավանդել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և միջազգային հարաբերությունների ֆակուլտետի բակալավրիատում և մագիստրատուրայում, ԵՊՀ Եվրոպական հետազոտությունների կենտրոնի մագիստրատուրայում, և հանրապետության այլ բուհերում :

բ) Դասախոսությունների անցկացման եղանակների կատարելագործում, նոր եղանակների ներդրում.

1.Սեմինար և գործնական պարապմունքների անցկացման եղանակների և մեթոդների վերանայում, դրանց կատարելագործում և նոր մեթոդների ներդրում:

Նոր բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրի ներդրմամբ պայմանավորված վերանայվել են առարկայական ծրագրերի բաղադրիչները և դրանց գնահատման ձևաչափերը:

գ) Ուսումնամեթոդական ծրագրերի, հարցաշարերի, խնդիրների, թեստերի ստեղծում և նոր առարկաների ներդրում.

Կրկնություններից խուսափելու և պրակտիկ փոփոխություններով պայմանավորված փոփոխություններ են կատարվել նաև ամբիոնի կողմից դասավանդվող առարկաների հարցաշարերում և թեստային առաջադրանքներում:

դ) Մեթոդական աշխատանք

Ամբիոնի անդամների վերապատրաստման գործընթացում մեծ ուշադրություն է դարձվել դասավանդման առաջատար մեթոդիկաների ուսումնասիրությանը և գործնական հմտությունների ձեռքբերմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնում քննարկման առարկա են դարձել դասավանդման մեթոդիկայի բարելավումն ու նոր մեթոդների կիրառումը: Արդյունքում ամբիոնը ներդրեց գիտելիքների ստուգման նոր եղանակներ, հատկապես ընթացիկ քննությունների իրականացման գործընթացում: Կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ավելացման արդյունքում մի շարք առարկաների ընթացիկ քննություններն իրականացվել են հետազոտական աշխատանքների նախապատրաստման և պաշտպանության ձևով:

Նկատի ունենալով, որ կրեդիտային համակարգի պայմաններում կարևորվում է ինքնուրույն աշխատանքի կատարումը, ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը որակով և ժամանակին պաշտպանության ներկայացնելու նպատակով ամբիոնն այդ ուղղությամբ ձեռնարկել է որոշակի աշխատանքներ: Հանձնարարվել է դասախոսներին առնվազն ամիսը մեկ անգամ հանդիպել ուսանողների հետ, ճշտել նրանց կողմից կազմված աշխատանքի պլանը, օգնել գրականության ցանկի պատրաստման և ընթացիկ հարցերում:

Ասպիրանտների, հայցորդների հետ տարվող աշխատանք և կադրերի վերապատրաստում

Ամբիոնն ունի *2 առկա* ուսուցմամբ ասպիրանտ /Մեղրյան Արմեն, Առաքելյան Ռոզա /, *1 հեռակա* ուսուցմամբ ասպիրանտ /Բելլույան Ֆիլիանա/ և *1* հայցորդ /Սիրանուշ Գրիգորյան/:Պարբերաբար քննարկվում են նրանց աշխատանքի ընթացքը, գիտական հոդվածները երաշխավորվում են տպագրության, այլ աջակցություն է ցուցաբերվում նրանց աշխատանքին: Ամբիոնի ասպիրանտներն ակտիվորեն ներգրավված են նաև ուսումնական պրոցեսում:

Բացի դրանից, ամբիոնում պարբերաբար հաստատվում են այլ բուհերի ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների թեմաներ, և ամբիոնի անդամների թվից նշանակվում են նրանց գիտական ղեկավարներ: Ատենախոսությունը ներկայացնելու դեպքում կազմակերպվում է նաև դրանց նախապաշտպանությունը: Բոլորովին վերջերս՝ դեկտեմբեր ամսին կազմակերպվեց Արցախի համալսարանի հայցորդի ատենախոսության նախապաշտպանությունը: Բավական հետաքրքիր թեմայով շարադրված ատենախոսության շարադրանքը քննարկվել է նախկին քննարկումներում արված առաջարկությունների լույսի ներքո, արվել են մի շարք փոփոխություններ, ինչի արդյունքում ամբիոնը դրական եզրակացություն է տվել ներկայացված աշխատանքին: Աշխատանքը առաջիկայում կներկայացվի հրապարակային պաշտպանության՝ հաշվի առնելով թեմայի արդիականությունը և Արցախի շուրջ ստեղծված իրավիճակը:

Բացի այդ, կազմակերպվել են մասնագիտական մինիմումների քննություններ այլ բուհի ասպիրանտի և հայցորդի համար:

Նախկին ասպիրանտներից դիմել են ամբիոն մասնագիտական մինիմումները հանձնելու, աշխատանքները ավարտին հասցնելու և հրապարակային պաշտպանությունն ներկայացնելու համար:

Գիտական նստաշրջանի կազմակերպում և մրցույթներին մասնակցություն.

Ամբիոնը ակտիվ ներգրավվածություն ունի միջազգային դատախաղերի կազմակերպմանը և անցկացմանը, որին մասնակցում են բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները: Առաջիկայում մեկամյա ընդմիջումից հետո կրկին տեղի կունենա Միջազգային մարդասիրական իրավունքի դատախաղ մրցույթը, որին մասնակցության համար կներկայանանք մեր թիմով՝ օգտագործելով նաև այդ ոլորտում բոլորովին վերջերս ներգրավված դասախոսի ներուժը:

ՈՒԳԸ նախաձեռնությամբ նախատեսվում էր սեմինարների շարք անցկացնել ՄԻԵԴ պրակտիկայի և նախադեպային իրավունքի թեմաներով: Նպատակ էինք դրել դրանցում հատկապես ներգրավել Արցախից բռնի տեղահանված և մեզ մոտ տեղափոխված ուսանողներին: Վերջիններիս քննական առարկաների տարբերությունների հանձնման հրատապությամբ պայմանավորված՝ սեմինարների շարքը տեղափոխվել է երկրորդ կիսամյակ:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչների հետ վերջերս կայացած հանդիպման արդյունքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ: Մասնավորապես, Կոմիտեն նախատեսում է կազմակերպել Միջազգային իրավունքի, Միջազգային մարդասիրական իրավունքի և իրավունքի հարակից ճյուղերի հետ կապված թեմատիկ քննարկումների շարք, որին ներգրավված կլինի նաև մեր ֆակուլտետը: Բացի այդ, Կոմիտեի հետ ձեռք բերված պայմանավորվածության շրջանակներում նախատեսվում է ամբիոնի և ֆակուլտետի ակտիվ համագործակցություն Միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի կրթահետազոտական հարթակին, որի հիմնական նպատակն է խթանել ՄՄԻ-ի և իրավունքի հարակից ճյուղերի վերաբերյալ ոչ ֆորմալ կրթության հնարավորությունները Հայաստանում:

Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի հետ պայմանավորվածություն ունենք համատեղ գիտաժողով անցկացնելու, որը շրջանակնեռում անդրադարձ կկատարվի նաև բռնի տեղահանված արցախահայերի իրավունքների իրացման խնդիրներին:

Իրավաբանական կրթության և պրակտիկայի ինտեգրում

Առանձին դասընթացների շրջանակներում ուսումնասիրվում են միջազգային և ներպետական դատական ատյանների պրակտիկ գործեր, ներառյալ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՄԱԿ-ի Միջազգային դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ և այլն: Միջազգային պրակտիկայի կիրառման վերաբերյալ մի շարք հարցեր ընդգրկված են նաև քննական տոմսերում:

Այս առումով կարևորում ենք նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ հեռավար ձևաչափով աշխատաժողովի մասնակցությունը, որը տեղի ունեցավ 2023 թվականի դեկտեմբերին: Դրա շրջանակներում քննարկվել են Դատարանի ներկա պրակտիկան, առկա խնդիրները և առաջիկա բարեփոխումները: Արդյունքում ստացված արդյունավետ և ծավալուն տեղեկությունները կմշակվեն և առաջիկայում ամբիոնի կողմից դասավանդվող համապատասխան առարկայի դասախոսությունների շրջանակներում կներկայացվեն ուսանողներին:

Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում ՄԻԵԴ Մեծ Պալատի պրակտիկային, նախադեպային իրավունքի զարգացումները դասավանդման շրջանակներում ներկայացնելու համար:

Գործընկեր կազմակերպության հետ քննարկումներ են եղել միջազգային ատյանների դատավորների այցեր իրավագիտության ֆակուլտետ կազմակերպելու, ինչպես նաև լավագույն ուսանողներին խրախուսելու նպատակով միջոցներ հայթայթել Մարդու իրավունքների եվրոպական դատարան ուսումնական այց կազմակերպելու նպատակով:

Ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերի արդիականացում

Եվրոպական և միջազգային իրավունք մասնագիտացման շրջանակում ընդգրկված դասընթացների մեծ մասը ապահովված է հայալեզու գրականությամբ: Ուսումնական նյութերի կառուցվածքն ու բովանդակությունը արդիականացնելու, դրանց պահանջվածությունն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ամբիոնը նպատակ է հետապնդում մի շարք դասընթացների համար պատրաստել ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր, մենագրություններ: Հետևում ենք նաև մասնագիտական գրականության և տարաբնույթ ուղեցույցների արդի հրապարակումներին՝ դրանք ուսումնական նյութերի շարքում ներառելու նպատակով: Ամբիոնի դասախոսներից ներգրավված են առաջիկայում պատրաստվելիք **«Փաստաբանությունը ՀՀ-ում» դասագրքի** հեղինակային խմբում:

Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում

Ամբիոնի աշխատակիցները պարբերաբար մասնակցում են միջազգային և ներպետական գիտաժողովների, քննարկումների, ինչպես նաև ԵՊՀ-ի կողմից սահմանված կարգով մասնակցում են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման դասընթացներին:

Ամբիոնի անդամները մասնակցել են հետևյալ վերապատրաստմանը՝

1. «Քննադատական մտածողության և իրավաբանական գործնական հմտությունների ներառումը Հայաստանի իրավաբանական ֆակուլտետների գործող ուսումնական ծրագրում/դասընթացներում» Dilijan December 2024

Պրոֆեսորադասախոսական կազմի համալրում

Ամբիոնը միջոցներ է ձեռնարկում դասախոսական կազմի համալրման ուղղությամբ: Ունենք Միջազգային մարդասիրական իրավունք առարկայի նոր դասախոս:

Հիմնական դասընթացների գործնական պարապմունքներն անցկացնում են ինչպես ամբիոնի դասախոսները, այնպես էլ ասպիրանտները: Շարունակական աշխատանքներ են իրականացվում նոր ասպիրանտներին և հայցորդներին ևս գործնական պարապմունքներին ներգրավելու համար:

Դասախոսները և ասպիրանտները ներգրավված են նաև պրակտիկ աշխատանքներում, որոշ դեպքերում՝ իրենց կողմից դասավանդվող առարկաների հետ ուղղակի առնչություն ունեցող, որը նպաստում է նաև դասավանդման պրոցեսում պրակտիկ նյութի մատուցմանը: Վերջիններս տարբեր միջազգային ծրագրերի շրջանակներում ակտիվորեն ներգրավված են նաև որպես փորձագետներ, որի արդյունքում մեծածավալ աշխատանք են իրականացնում նաև ոլորտային օրենսդրության կատարելագործման ուղղությամբ:

Ամբիոնի որոշ անդամներ դասավանդում են նաև հանրապետության այն բուհերում:

Միջազգային կապերի հաստատում և ընդլայնում.

«Էրազմուս+» դասախոսների փոխանակման ծրագրի շրջանակներում նախկինում Լեհաստանի Բելիստոկի համալսարանի իրավագիտության ֆակուլտետ կայացած այցի արդյունքում, ֆակուլտետի դասախոսներից կապ են հաստատել մեզ՝ հետ ցանկություն հայտնելով այցելել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ:

Իտալիայի Բոլոնիայի համալսարանից «Էրազմուս+» փոխանակման ծրագրի շրջանակներում ԵՊՀ-ում սովորող ուսանողի համար անգլերեն լեզվով ներկայացվել է փախստականների իրավական կարգավիճակի հետ կապված առարկայական ծրագիրը:

Ամբիոնի վարիչ՝ **Ա.Ասատրյան**